

ԲԺ. Լ. Ն. ԲԱԶԱՐՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՄԱՆԿԱՐՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՍՏ ՄԵԿ ԳՐԶԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Միջնադարյան անհայտ հեղինակի այս աշխատությունը, որ քննության է առնում ծծկեր երեխաների, ինչպես և մոր կամ ստընտու կնոջ խնամքին վերաբերող հարցերը, սկզբնադիրը չէ։ Դա մեր ձեռքն է հասել 14-րդ դարի սխալաշատ ընդօրինակությամբ¹ Շաբադյանքի մեջ պարզ երևում են մի շարք պակասավոր նախադասություններ ու խոսքեր, ընդհատված մտքեր և այլն։ Այդ ամենն աներկբա է դարձնում այն, որ ընդօրինակությունը կատարել է մի ոչ հմուտ և ոչ լավ գրագետ գրիչ ավելի հին, թերևս նույնպես աղճատ օրինակից։

Դժվար է հաստատապես ճշտել այդ անհայտ հեղինակի կամ այս աշխատության սկզբնագրի ստույգ ժամանակը։ Սակայն, նրա լեզվական նկարագիրն ու որոշ հատկանիշները նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ դա սկզբնապես գրված պիտի լինի 12-րդ դարից ոչ վաղ և 13-րդ դարի վերջերից ոչ ուշ։ Բացի մի քանի խառն ու աղճատ ոճերից, որ, անշուշտ, ընդօրինակողի նվազ հմտության արդյունքն են, հուշարձանի ոճն ու լեզուն կոկ ու սահուն միջին հայերենն է, բոլորովին զերծ թուրքերեն բառ ու ոճից. սակավաթիվ են նաև արաբերեն բառ-տերմինները, այն էլ գրված լատինական գեղանյութերի անուններ են կամ միջին հայերենի մեջ ընտանի դարձած բառ ու ոճեր։ Հուշարձանը լեզվական հատկանիշներով բավականաչափ մոտենում է մեծ բանաստեղծ Ֆրիկի լեզվին։

Ամբողջ հուշարձանը բռնում է 5,5 մեքենագիր էջ։

Ի՞նչ տիպի աշխատություն է սա, թարգմանական, թե՞ մի հայ բժշկի ինքնուրույն գործ և ե՞րբ է գրված։

¹ Գեա, Մատենադարան, № 8382 գրչագիր։

Հիմք ընդունելով մի շարք ծանրակշիռ հանգամանքներ, այսինքն՝ հայկական ժողովրդական բժշկականության հարուստ տվյալները, հայ բժշկականության վերելքը 11—13-րդ դ. դ., հատկապես Կիլիկիայի հայկական թագավորության դարաշրջանում, երբ հասարակական-տնտեսական կյանքը երկրում ուժեղ զարթոնք էր ապրում, քաղաքները ծաղկում էին ու քարգավաճում, նախկին հողատեր ֆեոդալներին աստիճանաբար փոխարինում էին քաղաքային բնակիչները՝ փողատեր վաճառականներն ու խոշոր արհեստավորները, երբ նոր հասարակական-տնտեսական միջավայրում կնոջ իրավական դրուժյունն էլ էր բարելավվում, հասարակական ասպարեզ էր դուրս գալիս կինը և այլն,— ահա երկրի այն ընդհանուր վերելքին համընթաց՝ զարգացել էր նաև գիտությունն ու դպրոցը, ներառյալ և բժշկագիտությունը (հայկական բժշկական դպրոցներ, Մխիթար Հերացի և այլն), կարելի է ենթադրել, որ տվյալ բժշկագիտական, մանկաբուժական հուշարձանը հայ բժշկի ինքնուրույն հեղինակություն է:

Անհայտ հեղինակն այս հետաքրքրական աշխատությունը գրելիս՝ օգտագործել է ոչ միայն հայ ժողովրդական բժշկականությունը, այլև նկատի է ունեցել նաև հույն և արաբ բժիշկների աշխատությունները քննության առարկա հարցերի մասին:

Այդ բժշկագիտական հուշարձանի մեջ արժարժված և ընդգրծված կենցաղային հարցերը՝ հեղինակը քննության է ենթարկում «պրոֆիլակտիկ» տեսագծով: Դրանք տվյալ ժամանակաշրջանում, գործնական որոշ նշանակություն են ունեցել մոր և մանկան կենցաղի առողջացման գործում:

Այժմ՝ դիմելով այդ հետաքրքրական հուշարձանի բովանդակության անմիջական քննարկմանը, պետք է նշենք, որ այդտեղ շարահյուսված են ծծկեր երեխայի խնամքին ու դիետետիկային վերաբերող 19 հիմնական հարցեր, որոնք մենք կվերապատենք մոտավորապես հեղինակի նշած կարգի համեմատ: Դրա հետ միասին մենք կտանք հուշարձանի հիմնական կետերի համառոտ բովանդակությունը:

1. Պորտը ինչպես կտրել, կապել ու փոշի ցանել, Փոշին ծեծում, տրորում են՝ հետը խառնելով աղբերաց արյուն, հոռմեական քիմոնի սերմեր, անուշահոտ մամուռը (Evernia ըստ Հ. Հ. Մնպետճյանի), ծիրանի ծառի խեժը և Sarcocolla բույսի խեժը:

2. Աղի, հաճախ նաև անուշահոտ վաննաներ, շփումներ, քսել ու շփել մարմինը մանուշակի ու վարդի յուղով և կարագով: Գերա-

դասելի է ծծկեր աղջիկներին շփել մանուշակի յուղով: Պետք է զգուշ լինել, որ շուր չընկնի երեխայի աչքերը, ականջներն ու բերանը:

3. Աչքերի խնամք:

4. Ականջների ու քթի խնամք. մաքրել բամբակի գնդիկով և յուղ քսել:

5. Հագուստ. հիմնականում չպետք է գրգռել մանկան մաշկը:

6. Բարուրելը. — «գտղան փատթեն զամէն օդուածքն (=հոգերը) ի տեղն դնեն և փատթեն»:

7. Քուն. — «զօրոցն կամ կեկ շարժեն, աղեկ և անուշ ձայն հանեն մինչև որ ի քուն լինի»:

8. Օդ, արև, ցուրտ, — օգտվել չափավոր:

9. Մարսողություն:

10. Դուրս գնալը, միզելը. — «ի բշտի տակէն յետեէն մատն դնեն, և թէ գող կենայ ի բուշտն, նա ի դուրս ելնէ»:

11. Մարմնամարզություն. մասաժ: — Ամեն օր մարզել մարմինը և անուշահոտ յուղերով օծել:

12. Խորհուրդներ:

13. Կրծքով կերակրելը:

14. Ատամներ դուրս գալը:

15. Կրծքից կտրելը. — հարմար է հով ժամանակ, ավելի լավ, տարվա ցուրտ եղանակներին:

16. Մծմոր ընտրություն. — ծծալը պետք է մաքրակյաց լինի, առողջ և ամուր, 25-35 տարեկան:

17. Կաթը եղունգով փորձելը:

18. Մծմոր կամ մոր առողջությունը (հիգիենան): Մծալը կամ մալը պետք է ամեն առավոտ տաք ջրով լվացվի (լողանա), ապա բաղնիսից դուրս գալուց հետո՝ մարզանք անի «զձեռսն և դոտսն և զկուրծսն կամ կեկ մարզեն»:

19. Լավ և վատ, առատ և սակավ կաթի մասին:

Այդ վերջին հատվածում հեղինակը՝ նկատի ունենալով դայածի բնության ջերմ ու պաղ լինելը, առաջարկում է այս կամ այն կերակուրը՝ նրա կաթի քանակն ու որակը փոփոխելու համար:

Անհայտ հեղինակի մտածելակերպի, ինչպես և շարադրելու եղանակի ու ոճի մասին որոշ գաղափար տալու համար՝ մեջ ենք դնում մի շարք ուշագրավ հատվածներ:

1. «Սև պատրաստ (այսինքն՝ զգուշ եղք, — Լ. Բ.), որ քամի և դեղ օդ, և խոշոր իրք յինքն չհասնի, և ամենայն իրք, որ տղա-

յական կաշին խոշորացնէ. և հանց թպտիր այլ պիտի, որ հովու-
թիւն օդին ըզմորթն տղայական ամրացնէ»:

2. «Եւ հազուատին խոշորութիւն զէն շառնէ կապած պահեն,
որ վտահ գոտն և զձեռն չի հարէ»:

3. «Եւ զձեռքն և զօդուածքն և զոտքն շարժել կու պիտի, և
քարշել կամաց և զօդուածն և վիզն և զանդամն մրտի տերևով և
վարդով ծծծէ քանի լուանան՝ մանուշակի եղով, վարդի, կովու կա-
րագ օծնէ, և վամաց մարզէ զանձն»:

4. «Ասացեալ են իմաստունք, թէ չէ պատեհ, որ յամուան եղա-
նակին զտղան ի կաթէն կտրեն, բայց թէ անճարակ լինի, և յոր-
ժամ կտրեն, տուր յամենայն ժամ խիարի ջուր և դժի ջուր և
փրփրեմի ջուր, և տուր զայն իրվին, որ զծարան կտրէ»:

5. «Մծցնօղն պատեհ է, որ յամէն վաղվնէ լուացվի տաք ջրով,
և յորժամ բաղնեցէն (sic!) ելնէ, զձեռսն և զոտսն և զկուրծսն
կամ կեկ մարձեն, և զայն կերակուրն (sic!) որ աղէկ արիւն ըն-
ծային»:

6. ... «Մուցիլն և կաթ տուօղն թէ մայր և թէ օտար, և իւր
ժամանակին լինի 25 տարէն մինչև 35, և երեսին գոյնն լաւ լինի և
կուրծքն փափուկ և լայն լինի և խելօք, ոչ խիստ գեր լինի և ոչ
խիստ աւաղ, և գերութիւն ի միսն լինի և ծծերն միշակ, ոչ խիստ
թույլ լինի և ոչ խիստ պինտ»:

7. «Եւ 2 տարի ծրծցեն զտղայն և այլ ամէնի»:

8. «Եւ յամէն վաղվնէ գիտենան, թր զծրծած կաթն մար-
սել է»:

9. «Եւ զտղայն ի յայն տունն քուն անել տան, որ խիստ և
պայծառ չլինի, և շթողուն, որ ի լոյսն հայի»:

10. «Տղան շատ մի թողուր յարեն և ի ցուրտն և շատ մի նըս-
տացներ»:

Այս հետաքրքրական հուշարձանի մեջ առողջ և դրական դա-
տողությունների ու խորհուրդների կողքին կան, թեպետ նվազ քա-
նակությամբ, նաև այնպիսի մտքեր ու ասույթներ, որոնք ցույց են
տալիս, որ մեր անհայտ հեղինակը՝ իր դարին տուրք տալով, կրել
է միջնադարյան սնոտիապաշտությունների ազդեցությունը: Այս-
պես, օրինակ, նա խորհուրդ է տալիս, երբ մանուկը շատ է լալիս,
նրա բերանը կաթցնել ծամած խունկ կամ՝ «սև հլուն մի կապէ
յօրոցն, որ ի նա հայի, որ աչաց սևն զօրացնէ. թէ կապուտ աչքն
լինի տղան, քիչ մի շան խաղողի կաթեցուր յաչքն», կամ՝ «եւ դա-
շակն ի մերձաւորութենէ հեռու լինի և այն պատճառովն՝ յորժամ

մերձատրութիւն առնէ, նա կաթն կու աւիրէ: Եւ երբ դայեակն պատեղատր լինի, չէ պատեհ, որ տղայ ծծցէ. մեկ մի ալ գտնու պիտի, որ տղային բնութիւն չափերի: Կամ՝ «... որ տղին ակռայ բուսնի ակռատակերն օծնէ լապստրակի ըղեղ և հաւու ճրագու, որ ելնէ հեշտութեամբ ակռան» և այլն:

Բաղդատեղով անհայտ հայ հեղինակի աշխատութիւնը Սորան Եփեսացու, «մանկան պահպանութեան գործի այդ առաջին մարտիկներից մեկի (Կոնյուա) պեղիատրիկ երկերից մնացած հատվածների հետ, մենք որոշ հարցերում նույնություն ենք տեսնում: Սակայն, շատ դեպքերում էլ նրանք միանգամայն տարբերվում են միմյանցից: Այս հանգամանքը հավանական է դարձնում այն, որ մեր հեղինակը միջնորդաբար կամ, թերևս անմիջականորեն ծանոթ է եղել Սորան Եփեսացու գործերին: Սակայն, եթե նկատի ունենանք նրանց մեջ եղած քաղմաթիւ տարակարծութիւնները, ապա պետք է ընդունենք, որ հայ հեղինակը, գլխավորապէս, հիմնվել է իր անձնական գիտողութիւնների ու փորձի վրա, ինչպես և օգտագործել է հայրենի թե՛ ժողովրդական և թե՛ գիտական բժշկականութիւնը, քանի որ նրա հրահանգներից ու խորհուրդներից շատերը մինչև վերջերս էլ պահպանվել են հայ ժողովրդական կենցաղում:

Մեջ բերված տվյալները մեղ հիմք են տալիս կարծելու, որ միջնադարյան հայ բժշկականութեան մեջ մանկաբարձութեան վերաբերող հարցերը աշխույժ հետաքրքրութիւն էին առաջ բերում և դրանց հատուկ տեղ էր տրվում:

А. Н. БАГАТУРЯН

МАТЕРИАЛЫ ПО ПЕДИАТРИИ ПО ОДНОЙ АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ РУКОПИСИ

В одной рукописи (№ 8382, хранящейся в Матенадаране), относящейся к XIV веку, мы нашли любопытные сведения по вопросам педиатрии в средневековой Армении, что побудило нас остановиться в данной статье на содержании этой рукописи. Произведение это является не автографом, а списком с труда, написанного в XII—XIII вв., на что указывают особенности языка, который по характеру своему больше подходит к языку

известного армянского средневекового поэта-демократа Фрика. Текст рукописи занимает 5 1/2 страниц. Выдвинутые в ней вопросы детского быта рассматриваются под углом профилактики и имеют, в разрезе прошлого, практическое значение с точки зрения оздоровления быта ребенка и матери.

Является ли она оригинальным произведением армянского средневекового врача или переведена с иностранного языка? К какому периоду истории Армении можно отнести эту работу? Продуктом какой социально-экономической среды она могла быть? На основании ряда достаточно обоснованных данных (богатого прошлого армянской медицины, его расцвета в XI—XIII вв., особенно в киликийский период армянской истории, когда социально-экономическая жизнь и классовое расслоение достигли достаточного развития, когда правовое положение женщины более упорядочилось), мы трактуем эту работу как оригинальный труд армянского врача XII—XIII вв., который в основном черпал материал для своей работы из опыта народа и личных наблюдений.

По всему видно, что автор был хорошо знаком с современной ему медицинской литературой, возможно, был знаком также и с педиатрическими трудами Сорана Эфесского, «одного из первых бойцов за охрану детства» (Конюс). Вопросы, затронутые автором рукописи, были отражены и в работах Сорана Эфесского, но в ряде случаев они расходятся в назначении того или иного мероприятия.

Переходя к содержанию рукописи, отмечаем, что в ней разбираются 19 основных вопросов ухода и диететики грудного возраста, которые в порядке, принятом в рукописи автором, являются следующими (местами мы приводим краткое изложение содержания главных пунктов):

1. Пуповина. Перевязка ее. Рекомендуются присыпка—протолченным и просеянным порошком драконовой крови, мирры, семян римского тмина, пахучим мохом «Эверния» (по А. А. Сепетчану), камеди растительного вещества саркокола и камеди абрикосового дерева.

II. Ванны соленые, часто благовонные. Натирания. Растирание фиалковым, розовым, сливочным маслами. Девочек следует предпочтительно натирать фиалковым маслом. Рекомен-

дуется быть внимательным, чтобы вода не попала в глаза, уши, рот.

III. Уход за глазами.

IV. Уход за ушами и носом, которые рекомендуется чистить ватным шариком, смазывать маслом.

V. Одежда. В основном она не должна раздражать кожу ребенка.

VI. Пеленание. «При пеленании каждый раз расправь надлежащим образом суставы и после пеленай».

VII. Сон, ребенка надо убаюкивать гармоничной песнею.

VIII. Воздух, солнце, холод, пользоваться ими надо в умеренных, не раздражающих дозах.

IX. Пищеварение.

X. Стул. Мочеиспускание. «Надави мизинцем на задний проход, чтоб легче было мارаться ребенку».

XI. Гимнастика. Массаж. Автор советует ежедневно производить пассивные гимнастические движения и растирать тело ребенка благоуханными маслами.

XII. Различные советы матерям-кормилицам.

XII. Кормление грудью.

XIV. Прорезывание зубов.

XV. Отнятие от груди,—следует производить в прохладное, лучше в холодное время года.

XVI. Выбор кормилицы. Кормилица должна быть чисто-плотной, здоровой, крепкой, в возрасте 25—35 лет.

XVII. Ногтевая проба молока.

XVIII. Гигиена кормящей. Кормящая должна каждое утро мыться горячей водой, по выходе из бани должна производить физические упражнения.

XIX. О молоке—хорошем и плохом, обильном и скудном. В этом последнем разделе автор, в зависимости от природы кормящей—теплой, прохладной,—предлагает соответственную пищу для изменения качества или количества ее молока. Автор, следуя догме врачей античного мира и средневековья, приписывает каждому индивиду свойственный ему темперамент и, таким образом, выдвигает в своеобразной форме вопрос о конституции.

Приводим для ознакомления несколько выдержек из рукописи:

I. «Надо быть осторожным, чтоб ветер, плохой воздух и грубые вещества не коснулись бы ребенка, также все, от чего грубеет кожа. Но нужны такие условия, при которых от прохладного воздуха укреплялась бы кожа ребенка».

II. «Грубость одежды не должна вредить запеленованному ребенку, чтоб быть уверенным, что ноги и руки ребенка не будут протерты».

III. «Руки, суставы, ноги надо двигать, тянуть осторожно и суставы, и шею, и члены. В день один раз упражняй тело. Для каждого купанья растолки листья мирты и розы и втирай фиалковое, розовое масла и коровье масло и осторожно массируй тело».

IV. «Ученые говорят, что не надо ребенка отрывать от груди летом. Хорошее время отлучить от груди весенние дни, осенние и, наконец, зимние. Но если обстоятельства заставят, дай всегда тыквенную воду, воду портулака и давай такие вещества, которые утоляют жажду».

V. «Кормящая должна каждое утро мыться горячей водой и по выходе из бани должна укреплять руки и ноги и грудь, и принимать ту пищу, которая дает хорошую кровь».

VI. «Кормящая, будь она мать или кормилица, должна быть в возрасте 25—35 лет. Цвет лица должен быть хороший, грудь мягкая и широкая, нравом спокойная, не очень полная, не очень худая, имела б силу и развитые мышцы, и была б не худая. Груды должны быть средние, не очень слабые и не очень крепкие».

VII. «Когда ребенок засыпает в люльке или когда его укачиваешь, спой приятным и сладким голосом, пока заснет».

VIII. «Каждое утро надо убедиться, что молоко усвоено».

IX. «При укладывании спать следи, чтобы слишком яркий и сильный свет не падал в глаза».

X. «Не оставляй ребенка долго на солнце и на холоде».

XI «Корми ребенка грудью до 2-х лет и больше».

Хотя и редко, в рукописи встречаются высказывания, которые свидетельствуют, что автор в определенной степени на-

ходилась во власти средневековых предрассудков и традиций, освященных рядом медицинских авторитетов.

Приведем некоторые из них:

1. «Если ребенок плачет, вкапать в рот разжеванный ладан».

2. «Завяжи одну черную бусу на люльке, чтобы ребенок смотрел на нее, чтобы чернота глаз усилилась бы. Если у ребенка синие глаза, закапай сок послена».

3. «Кормилица не должна иметь половую связь—молоко испортится. Если кормилица забеременеет, не надо давать ребенку сосать ее грудь, надо найти другую (кормилицу), чтоб не испортить природу ребенка».

4. «При прорезывании зубов натирать десны заячьими мозгами и куриным жиром».

Приведенные данные дают основание полагать, что в средневековой армянской медицине вопросы педиатрии вызвали определенный интерес и им уделялось определенное место в медицине.